ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 մարտի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

30
(3239)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

10 ՄԼՆ ԴՐԱՄ՝ «ԻՄ ՔԱՅԼԸ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ Հայաստանի երկրորդ խոշոր հարկատու համարվող «Մոբայլ Սենթր Արտ» ընկերությունը 10 միլիոն դրամ է փոխանցել Իմ քայլը հիմնադրամին, որը ղեկավարում է վարչապետի տիկին (նախկին) Աննա Հակոբյանը: Թվերը, ինչ խոսք, տպավորիչ են, սակայն առավել հետաքրքրական է այս պատմության ենթատեքստը: «Մոբայլ Սենթր Արտ» ընկերության սեփականատեր Արթուր Պետրոսյանը քաղաքական անցյալ ունի. դեռեւս 2013 թվականից նա եղել է ՀՀԿ Երեւանի ավագանու անդամ՝ լինելով նախկին իշխանության կարկառուն ներկայացուցիչներից մեկը: Այսօր, սակայն, նույն գործարարը գործում է բոլորովին այլ իրողությունների պայմաններում. Նիկոլ Փաշինյանի իշխանության տարիներին նրա բիզնեսը ոչ միայն զգալիորեն ընդլայնվել է՝ հեռախոսների ներմուծման եւ պատժամիջոցների տակ գտնվող Ռուսաստանի Դաշնություն արտահանման ոլորտում, այլեւ ընկերությունը դարձել է երկրի խոշորագույն հարկատուներից մեկը: Եւ ահա, որպես թերեւս «շնորհակալական ժեստ», 10 միլիոն դրամի նվիրատվություն է արել վարչապետի ընտանիքի հետ կապվող հիմնադրամին, որը համարժեք է շուրջ 26 հազար ԱՄՆ դոլարի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Վերջին օրերին ակտիվորեն քննարկվում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավի ձեւաչափը եւ թիմային ներկայության առանձնահատկությունները: Հատկանշական է, որ այսպես կոչված «ուրախ ավտոբուսում» վարչապետը հաճախ երեւում է երկրի երկրորդ դեմքի՝ Ալեն Սիմոնյանի հետ միասին: Ուղիղ եթերում նրանք միասին ավտոբուսի մեջ փորձարկում են տարբեր երկարավուն ուտեստներ՝ եգիպտացորեն, պերաշկի, ընկույզի շարոց, թթու եւ ալյուրի լավաշի բրդուջներ եւ այլն: Բայց քարոզարշավի բուն գործողությունների ժամանակ Ալեն Սիմոնյանը Փաշինյանի շուրջը եւ տեսադաշտում չի երեւում: «Ժողովուրդ» օրաթերթը կադրերում արձանագրել է, որ քաղաքացիների հետ զրույցներում Նիկոլ Փաշինյանը պտտվում, ինչ-որ հարցեր է տալիս իր սիրելի մի քանի նախարարների միայն. արդարադատության նախարար Սրբուհի Գալյանին, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանին եւ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանին: Նրանց հետ միասին է վարչապետը տանում քարոզարշավի հիմնական բովանդակային հատվածը: Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եւ այլ թիմակիցներ կադրերից թողած տպավորությամբ ապահովում են հավաքների մարդաշատությունը: Այսպիսով, քարոզարշավի հիմնական «դեմքը» շարունակում է մնալ Նիկոլ Փաշինյանը՝ իր գլխարկով եւ կրծքանշանով, իսկ մյուս անդամները՝ Վահագն Ալեքսանյանի ձեւակերպմամբ, ուսապարկի կարգավիճակ են հիշեցնում:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փետրվարի 9-ի արտահերթ նիստում հաստատել է 2026թ. հունիսի 7-ին նշանակված ԱԺ հերթական ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն ընտրություններին մասնակցելու համար օգտահաշիվ ստանալու նպատակով էլեկտրոնային եղանակով դիմում են ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով փետրվարի 9-ից մինչեւ ապրիլի 23-ը: Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են ապրիլի 13-ից մինչեւ ապրիլի 23՝ ժամը 18:00: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է ապրիլի 23-ից մինչեւ մայիսի 3-ը՝ ժամը 18:00-ն: Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վիճակահանությամբ տրամադրվում են մինչեւ մայիսի 3-ը: Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված պատգամավորի թեկնածուներն իրենց գույքի եւ եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են մինչեւ մայիսի 13-ը: Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները՝ կուսակցության գույքի եւ եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են մինչեւ մայիսի 13-ը: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է մայիսի 8-ից հունիսի 5-ը:

Հայ առաքելական եկեղեցում հերթական կադրային փոփոխությունն է արձանագրվել: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայտնել է, որ Վայոց ձորի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը ազատ է կացուցվել թեմական առաջնորդի պաշտոնից եւ կոչվել հանգստյան՝ իր գրավոր եւ բանավոր դիմումների հիման վրա: Հայրապետական տնօրինությամբ Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մակար եպիսկոպոս Հակոբյանը համատեղության կարգով նշանակվել է Վայոց ձորի թեմի առաջնորդական տեղապահ՝ իրականացնելու թեմական առաջնորդի պարտականությունները: «Ժողովուրդ» օրաթերթը հիշեցնում է, որ Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանի անունը տարիներ շարունակ հայտնվել է մամուլի հրապարակումների կենտրոնում նաեւ տնտեսական գործունեության թեմայով: Մասնավորապես, տարբեր հրապարակումների համաձայն՝ Վայոց ձորի մարզում գործող մի քանի փոքր հիդրոէլեկտրակայաններ կապվում են նրա անվան հետ: Հերմոն համայնքի ղեկավար Գայ Օհանյանը դեռ տարիներ առաջ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատել էր այդ տեղեկությունը՝ նշելով, որ գյուղի տարածքում գործող ոչ թե երկու, այլ երեք փոքր ՀԷԿ-երը պատկանում են Սրբազանին: Բացի այդ, Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը վերջին ամիսներին հայտնի էր նաեւ իր հրապարակային դիրքորոշումներով:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐ ՄԻԱՅՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

«Հայէկոնոմբանկ» Ը Խորհրդի նախագահ Սարիբեկ Սուքիասյանը ձեռքբերումների, առաջնորդության, հաջողության բանաձեւի, անվտանգ եւ կայուն տնտեսական միջավայրի եւ ապագայի տեսլականի մասին պատմել է Tert.am-ի հետ հարցազրույցում:

Մարդկային գործոնը՝ ռազմավարական կառավարման կիզակետում

-Մերօրյա ֆինանսական լանդշաֆտն էական փոխակերպումների է ենթարկվում: Այս պայմաններում բարդ մարտահրավեր է պահպանել բիզնեսի աճի բարձր տեմպերը եւ լիարժեք իրացնել ամենակարեւոր ակտիվի՝ մարդկային կապիտալի ներուժը: Պարոն Սուքիասյան, արհեստական բանականության եւ թվային փոխակերպման ժամանակաշրջանում ինչպե՞ս է Ձեզ հաջողվում պահպանել այդ հավասարակշռությունը:

-Ֆինանսական համակարգն այսօր ակտիվ փոփոխությունների փուլում է. ավանդական մոդելներն աստիճանաբար տեղի են տալիս նորարարական լուծումներին: Եւ Հայէկոնոմբանկը, որպես երկրի տնտեսական ակտիվությունն ու ֆինանսական կայունությունը խթանող կարեւոր դերակատար, չի կարող անմասն մնալ կամ ազդեցություն չկրել այդ գործընթացներից:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ 2025 թվականը Հայէկոնոմբանկի համար կայուն առաջընթացի տարի էր: Բանկը շարունակել է ամրապնդել իր դիրքերը ոլորտում՝ նախորդ տարվա համեմատ գրանցելով հիմնական ցուցանիշների զգալի աճ: Մեզ համար ավելի կարեւոր է համակարգում կայուն աճը, քան լրացուցիչ եկամուտներ գեներացնելը, ինչը կարող է ապագայում ավելի մեծ ռիսկեր առաջացնել:

Բանկի կառավարիչների աշխատանքն, ընդհանուր առմամբ, դրական եմ գնահատում՝ դիտարկելով այն՝ որպես ռազմավարական ճիշտ որոշումների եւ թիմային աշխատանքի միասնական արդյունք:

Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում մեր թիմի մասնագիտական կարողությունների զարգացման եւ աճի համար: Միաժամանակ, ոգեւորությամբ համալրում ենք մեր թիմը խելացի, բանիմաց եւ ճկուն մտածողություն ունեցող ղեկավարներով, ովքեր առանձնանում են իրենց պրագմատիկ մոտեցմամբ եւ իրատեսական տեսլականով: Թիմի համալրումն անընդհատ գործընթաց է. մենք միշտ կարիք ունենք եւ պատրաստ ենք ընդունել լավ մասնագետին եւ լավ վարձատրել նրան:

Իմ բազմամյա փորձով կարող եմ ասել, որ յուրաքանչյուր թիմում էլ կան ղեկավարներ, ովքեր նախաձեռնող են, պատրաստ են մեծ պատասխանատվություն ստանձնել եւ վստահությամբ առաջնորդել, եւ կան այնպիսիք, ովքեր անշեղորեն կատարում են հանձնարարությունները: Մենք արժեւորում ենք յուրաքանչյուրին՝ ձգտելով ապահովել այնպիսի միջավայր, որտեղ մարդիկ կկարողանան դրսեւորել իրենց ուժեղ կողմերը եւ զարգանալու հնարավորություն կունենան: Իմ պատկերացմամբ շատ կարեւոր է մարդկանց դերերի ճիշտ բաշխումը եւ յուրաքանչյուրին ճիշտ ժամանակին ճիշտ տեղում նշանակելը: Բայց երբեմն պատահում է նաեւ, որ ստիպված ես լինում վերանայել որոշումներդ, որովհետեւ բոլորը չեն, որ առաջիայաց մտածողություն ունեն, կամ պատրաստ են նախաձեռնել, այլ կերպ ասած, պատրաստ չեն լավ կատարողից դառնալ լիդեր: Իհարկե, դրա հիմքում տարբեր պատճառներ կարող են լինել՝ մասնագիտական ներուժի սպառում, «անառողջ» նկրտումներ եւ այլն: Ամեն դեպքում, ցանկացած տարաձայնություն կամ խնդիր պետք է լուծվի բարեկիրթ ձեւով եւ տրամաբանական հանգուցալուծումով:

Հաջողության ճանապարհը՝ աշխատասիրություն, խոհեմություն եւ պրագմատիկ մոտեցում

-Հաճախ գործարարների պատմության հետեւում մարդիկ դավեր են փնտրում: Ինչպե՞ս է Ձեզ հաջողվում տասնամյակներ շարունակ լինել գործարար միջավայրում:

-Ես եւ մեր ընտանիքը հարստացել ենք մեր աշխատասիրության, համառության եւ գիտելիքների շնորհիվ, մեզ ոչ ոք չէր կարող հարստացնել, մենք հարստացել ենք մեր ուժերով եւ խելքով: Մեզ ճանաչողները գիտեն մեր անցած ուղու մասին եւ կհաստատեն, թե ինչպես էր հայրս մեզ՝ իր որդիներին, պատանեկության տարիներին տանում գործարան եւ ներգրավում աշխատանքներում: Մեր ընտանիքը Հայաստանում առաջիններից է, որ տարիների ընթացքում կարողացել է բիզնես մշակույթ ձեւավորել եւ այն դարձնել համակարգային: Իհարկե, տարբեր ժամանակներում մեր բիզնեսներին տիրանալու փորձեր, ճնշումներ եղել են, բայց մենք համառորեն պայքարել եւ մեր ստեղծածը պահպանել ենք. ես իմ կյանքում երբեք ոչ մեկից եւ ոչնչից չեմ վախեցել, եւ միշտ պատրաստ եմ եղել ամեն ինչ անել՝ մեր մեծ ընտանիքը, մեր ստեղծածը, մեր արժեքները պաշտպանելու համար:

Մենք միշտ առաջնորդվել ենք մեր հոր՝ Ալբերտ Սուքիասյանի պատգամով. «Երբեք աչք մի՛ դիր ուրիշի ունեցվածքին, բայց նաեւ պայքարի՛ր սեփականը պահելու համար եւ թույլ մի՛ տուր ոչ մեկին քոնը քեզնից վերցնել»: Մենք անցել ենք քրտնաջան աշխատանքի եւ պայքարի ճանապարհով՝ հասնելով հաջողությունների Աստծո հովանու ներքո: Դժվարությունները մեզ ավելի են ուժեղացրել եւ մենք չենք վախենում նախանձից, չարից կամ մեր հանդեպ թշնամական վերաբերմունքից:

Առհասարակ, մենք մշտապես կարեւորում ենք հանրային վստահությունն ու հասարակության կարծիքը եւ բաց ենք առողջ քննադատության համար, որովհետեւ դա բացթողումները շտկելու առիթ է. ցանկացած խելամիտ կարծիք նոր մոտիվացիա է տալիս: Ես սիրում եմ լսել, վերլուծել եւ ցանկացած դիտարկում դարձնել զարգացման նոր հնարավորություն:

Բայց, ցավոք, ավելի հաճախ հանդիպում է քննադատություն, որը որեւէ հիմք չունի եւ իրականության հետ որեւէ աղերս չունի: Սա, իհարկե, անընդունելի է: Եվ, ընդհանրապես, անառողջ քննադատությանն արձագանքելը ժամանակի վատնում է, մենք նախընտրում ենք դրա փոխարեն գործով զբաղվել: Ավելին, մենք ունենք լավ պատրաստված մասնագետների թիմ, ովքեր պաշտպանում են մեր շահերը տարբեր ատյաններում:

-Հաճախ գործարարներին կապում են քաղաքականության հետ: Որքանո՞վ եք ներգրավված քաղաքական գործընթացներին:

-Ո՛չ իմ խառնվածքով, ո՛չ իմ տեսակով ես քաղաքականությամբ զբաղվող մարդ չեմ: Կարծում եմ՝ բիզնեսը չի կարող գոյություն ունենալ վակուումի մեջ. ցանկացած տնտեսական զարգացում ուղղակիորեն կապված է երկրի անվտանգության եւ քաղաքական կայունության հետ:

Ես սիրում եմ այն գործը, ինչով զբաղվում եմ եւ կարծում եմ՝ իսկական գործարարը կարիք չունի քաղաքականությամբ զբաղվելու: Իմ ժամանակի հիմնական մասը նվիրել եմ բիզնեսին եւ ես երջանիկ եմ, որ անում եմ այն, ինչը լավ է ինձ համար, ընտանիքիս ու երկրիս համար:

Մենք խաղաղության կողմնակից ենք: Միայն խաղաղության պայմաններում է հնարավոր իրականացնել բիզնեսի ռազմավարական պլանավորում: Ես գործարար եմ, ով կարող է նոր նախագծեր կյանքի կոչել եւ թիմեր առաջնորդել միայն խաղաղության պայմաններում:

Ապագայի տեսլականը՝ բարձր նշաձող եւ հավակնոտ ծրագրեր՝ հանուն Հայաստանի տնտեսության զարգացման

-Հայացք գցելով ապագային՝ ո՞րն է Ձեր տեսլականը: Ինչպե՞ս եք պատկերացնում Սուքիասյան ընտանիքի դերը Հայաստանի վաղվա տնտեսական դիմագծում:

-Բանկի ընթացիկ գործունեությունը կառավարող մարմնի առջեւ հավակնոտ բիզնես նպատակներ են դրվել, իսկ զարգացման տեմպը խիստ է սահմանվել:

Մեր ընտանիքը շարունակում է առաջ շարժվել, նոր թիրախներ սահմանել, նոր աշխատատեղեր ստեղծել՝ հույսով, որ Հայաստանում երկարատեւ կայունություն եւ խաղաղություն կլինի:

Տնտեսությունը կենդանի օրգանիզմ է. այն արձագանքում է յուրաքանչյուր փոփոխության: Այսօր տնտեսական միջավայրը խիստ փոփոխական է ամբողջ աշխարհում, ինչը մեզնից հավելյալ ճկունություն է պահանջում: Մենք փորձում ենք մեր բազմամյա փորձով, աշխատասիրությամբ եւ որ ամենակարեւորն է՝ հոգի ու ջանք դնելով, ապահովել մեր բիզնեսի կայունությունն ու առաջընթացը:

Բնականաբար, բոլոր բիզնեսներում էլ խնդիրներ լինում են՝ անկախ ոլորտից կամ մասշտաբից: Ես իմ փորձառությամբ համոզված եմ, որ ցանկացած խնդիր ունի քաղաքակիրթ լուծում: Ինչպես հայրս էր հաճախ ասում՝ մարդկանց հետ պետք է «կռվել խելքով»: Մենք պատասխանատու ենք մեր ունեցած հանրային վստահության համար:

Մեր խնդիրը երբեք միայն սեփական բիզնեսների առաջխաղացումը կամ մեր ընտանիքի բարօրությունը չի եղել: Մեր նպատակը երկրում տնտեսական աճի շարժիչ ուժ լինելն է, եւ ես հպարտ եմ, որ գործարարությամբ շարունակում ենք մեր երկրում լինել խոշոր հարկատու՝ ստեղծելով նոր արժեք, նոր աշխատատեղեր եւ նոր հնարավորություններ: Սա է շարունակում լինել մեր տեսլականն առաջիկա տարիների համար: (Գ)

ԻՆՉ ՈՒՆԻ ՆԱԽԿԻՆ ՓՈԽՄԱՐԶՊԵՏԸ

Armlur.am-ը ուսումնասիրել է ՔՊ-ական ակտիվ գործիչ Կարեն Գրիգորյանի գույքի ու եկամուտների հայտարարագիրը: Գրիգորյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ակտիվ անդամ է, ով տարբեր տարիներին զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ՝ եղել է Արմավիրի փոխմարզպետ, ապա ընտրվել է ԱԺ պատգամավոր, իսկ ներկայումս Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու անդամ է:

3 միավոր անշարժ գույք

Ըստ ներկայացված տվյալների՝ Կարեն Գրիգորյանը ունի անշարժ գույք Արմավիրի մարզի Փարաքար համայնքում: Մասնավորապես, նա համատեղ սեփականությամբ ունի հողամաս, որը ձեռք է բերվել դեռեւս 2000 թվականին: Բացի այդ, նույն համայնքում առկա է համատեղ սեփականությամբ անհատական բնակելի տուն՝ տնտեսական շինություններով, ձեռք բերված 2012 թվականին:

Հայտարարագրում նշված է նաեւ, որ 2024 թվականին Գրիգորյանը ձեռք է բերել եւս մեկ անհատական բնակելի տուն՝ արդեն միանձնյա սեփականությամբ:

Armlur.am-ը պարզեց, որ պաշտոնյայի անունով գրանցված են նաեւ տրանսպորտային միջոցներ՝ 2018 թվականի արտադրության JEEP մակնիշի ավտոմեքենա եւ 2008 թվականի արտադրության BYD, որը ձեռք է բերվել 2021 թվականին:

Ինչ վերաբերում է ֆինանսական միջոցներին, ապա բանկային հաշիվների մնացորդները կազմել են ընդհանուր շուրջ 1 միլիոն 38 հազար դրամ, ինչպես նաեւ առկա է 1.5 միլիոն դրամ կանխիկ գումար:

Հայտարարագրի համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում Գրիգորյանը ստացել է 2 միլիոն 754 հազար դրամ եկամուտ՝ աշխատավարձի տեսքով «Հայավտոկայարան» ընկերությունից:

Միեւնույն ժամանակ, Armlur.am-ը նկատեց, որ պաշտոնյայի վարկային պարտավորությունները կազմել են 3 միլիոն 700 հազար դրամ:

Հիշեցնենք, որ Կարեն Գրիգորյանը 2016 թվականից «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է, 2018-2020 թվականներին զբաղեցրել է Արմավիրի փոխմարզպետի պաշտոնը, իսկ 2020 թվականին ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր «Իմ քայլը» դաշինքի ցուցակով: Ներկայումս նա Փարաքար համայնքի ավագանու անդամ է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ

Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը ազատ արձակվեց տնային կալանքից: Նրա նկատմամբ կիրառվել է ստորագրություն չբացակայելու մասին, ինչպես նաեւ վարչական հսկողություն: Ըստ դատարանի որոշման՝նրան արգելվում է այցելել Արագածոտնի թեմի առաջնորդարան, շփվել գործով վկաների հետ:

ՄԵՐԺԵԼ Է

Վերաքննիչ դատարանը մերժել է վարչական պատասխանատվության ենթարկել Բագրատ Սրբազանին հավաքներ անցկացնելու կարգը խախտելու համար: «Կոնկրետ այս գործով ասում են՝ երբ Լիդյա Մանթաշյանը ծանուցել է «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հավաքի մասին, իսկ Բագրատ Սրբազանը փաստացի առաջնորդել է այդ հավաքը, այն այդ փաստի ուժով դարձել է ապօրինի: Դատարանները, ի դեպ, հայցի մերժման հիմքում դրել են այն պատճառաբանությունը, որ վարչական իրավախախտման արձանագրություն կարող էր կազմել միայն անձամբ քաղաքապետը, եւ չէր կարող այդ լիազորությունը վերապահել այլ անձի»,-ասել է փաստաբան Տաթեւիկ Սողոյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ

Երեկ ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Նարեկ Ապիտոնյանը հանդիպում է ունեցել KfW բանկի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցել են՝ Հայաստանի էներգետիկ ոլորտի ծրագրերի ղեկավար Յուլիա Մորավիցը, էներգետիկ ոլորտի ծրագրերի գլխավոր ինժեներ Ռալֆ Քինաստը, ինչպես նաեւ KfW հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Ջառա Չատինյանը: Հանդիպման ժամանակ քննարկվել են համագործակցության ընթացիկ ուղղությունները, ծրագրերի համակարգման մանրամասները եւ հետագա քայլերը: Փոխադարձաբար բարձր են գնահատվել երկուստեք ջանքերը՝ ուղղված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի իրականացման ընթացքն ապահովող քայլերին:

ՀՐԱՏԱՊ ԴԻՄՈՒՄ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԸ ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ԸՆԴՀԱՏՎԵԼ Է

«Մարտի 13-ին ընտանիքի հետ հեռախոսազրույցի ժամանակ Ռուբեն Վարդանյանը փորձել է հրապարակային կոչով դիմել Ադրբեջանի օմբուդսմեն Սաբինա Ալիեւային, բայց հեռախոսազրույցը հարկադրաբար ընդհատվել է:



Ռուբեն Վարդանյանը ստիպված է եղել դիմել այս քայլին, քանի որ նախորդ 10 օրերին օմբուդսմենի հետ փաստաբանի միջոցով, գրավոր դիմումներով եւ հեռախոսազանգերով կապ հաստատելու փորձերը որեւէ արդյունք չեն տվել: Դատավարություններն ավարտվել են մեկ ամիս առաջ, սակայն ո՛չ Ռուբենը, ո՛չ էլ, մեր տեղեկություններով, մյուս հայ բանտարկյալներն իրենց պաշտոնական դատավճիռների տեքստերը որեւէ լեզվով՝ ռուսերեն, հայերեն կամ ադրբեջաներեն, դեռ չեն ստացել: Նրանք չգիտեն, թե ինչ հոդվածներով են դատապարտվել, երբ կամ ուր են նրանց տեղափոխելու: Մենք խորապես մտահոգված ենք ստեղծված իրավիճակով: Նրա եւ մյուս հայ գերիների կացության մասին արժանահավատ տեղեկությունների բացակայությունը եւ Ադրբեջանում մարդու իրավունքների անկախ մեխանիզմների վերացումը, այդ թվում՝ երկրից Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի հեռացումը, բոլոր գերիներին զրկում են ինստիտուցիոնալ որեւէ պաշտպանությունից: Մենք նաեւ մտավախություն ունենք, որ նույնիսկ կարճ հեռախոսազրույցները՝ կապի պահպանված միակ միջոցը, կարող են դադարեցվել: Մենք հրապարակում ենք Ադրբեջանի օմբուդսմեն Սաբինա Ալիեւային ուղղված Ռուբենի դիմումի աուդիոձայնագրությունը, որը նրան թույլ չեն տվել ավարտել: Հուսով ենք՝ այն կհասնի հասցեատիրոջը»:

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀՐԱՏԱՊ ԴԻՄՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՕՄԲՈՒԴՍՄԵՆ ՍԱԲԻՆԱ ԱԼԻԵՎԱՅԻՆ (Փոխանցվել է ընտանիքի հետ հեռախոսազրույցի ընթացքում)

2026թ. մարտի 13. «Ես կցանկանայի... Ադրբեջանի Հանրապետության օմբուդսմեն, տիկին Ալիեւա. ստիպված եմ դիմել Ձեզ: Չնայած 2023-ի հոկտեմբերին տեսախցիկի առաջ մեր առաջին հանդիպման ժամանակ Դուք մեծահոգաբար տրամադրել էիք ձեր հեռախոսահամարը, վերջին 10 օրվա ընթացքում ես չեմ կարողացել կապվել Ձեզ հետ, թեեւ փաստաբանի միջոցով, գրավոր դիմումներով եւ զանգելու փորձերով գործադրել եմ հնարավոր բոլոր ջանքերը: Հետեւաբար, ստիպված եմ դիմել Ձեզ հրապարակայնորեն: Եւ, ցավոք, ինձ ու իմ գործընկերների հետ այստեղ կատարվողը ձեզ փոխանցելու այլ միջոց չունեմ: Ես խնդրում եմ հանդիպում Ձեզ հետ: Դուք հանրային միակ հաստատության ղեկավարն եք, որին կարող եմ դիմել այս իրավիճակում, քանի որ ադրբեջանական մյուս բոլոր մարմինները կա՛մ իրականացնում են պետական վերահսկողություն, կա՛մ... (Այստեղ Ռուբեն Վարդանյանին ընդհատում են եւ թույլ չեն տալիս շարունակել Ադրբեջանի օմբուդսմենին ուղղված իր խոսքը) Եւ հիմա նրանք նույնիսկ թույլ չեն տալիս ինձ դա անել: Ուզում եմ ասել, որ, ցավոք, նրանք թույլ չեն տալիս ինձ դիմել Ձեզ, որպեսզի Դուք՝ միակ մարդը, որը կարող է այս իրավիճակում, այնտեղ... Ես մեկ ամիս է՝ չեմ կարողանում ստանալ դատավճիռը. ո՛չ ռուսերեն, ո՛չ հայերեն, ո՛չ ադրբեջաներեն. չգիտեմ՝ ինչի համար եմ դատապարտվել եւ որ հոդվածներով: Ես հանդիպում եմ խնդրում, որպեսզի կարողանանք քննարկել այս ամենը: Որովհետեւ, ցավոք, Կարմիր խաչը հեռացել է: Այստեղ չկա որեւէ այլ հաստատություն, որը կարող է մեզ հետ կապ պահել: ՀՀ կառավարությունն այստեղ չունի ներկայացուցչություն եւ զբաղված է մատակարարումներով...» (Զանգն ադրբեջանական կողմից ընդհատվում է՝ հնարավորություն չտալով Ռուբեն Վարդանյանին ավարտել օմբուդսմենին ուղղված իր խոսքը):

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

«Այսօր (երեկ՝ խմբ.) առավոտյան մենք վերացրինք Իրանի անվտանգության ծառայության ղեկավար Ալի Լարիջանիին: Նրա հետ միասին՝մենք վերացրինք նաեւ «-Բասիջի» հրամանատարին»,-այս մասին հայտարարել է Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն:

Իրանական կողմը հերքում է Իսրայելի այս պնդումները:

ՈՐՍԱՑԵԼ ԵՆ

Իրաքի հակաօդային պաշտպանության ուժերը որսացել են Բաղդադում ԱՄՆ դեսպանատան ուղղությամբ թռչող անօդաչու թռչող սարք, հաղորդում է Al Jazeera-ն:

Հեռուստաալիքի տվյալներով՝ դիվանագիտական ներկայացուցչության շենքի մոտ պայթյուն է լսվել:

«Մի քանի ժամ առաջ հարձակում էր տեղի ունեցել «Ալ-Ռաշիդ» հյուրանոցի վրա. անօդաչու թռչող սարքը հարվածել էր շենքի վերին հարկերին, որտեղ տեղակայված էին Եվրամիության եւ Սաուդյան Արաբիայի դիվանագիտական առաքելությունները»:

Շենքերը գտնվում են Կանաչ գոտում, այն տարածքում, որտեղ տեղակայված են օտարերկրյա եւ կառավարական կառույցներ:

ՋՈՀԵՐ

Իրանի մայրաքաղաքին ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից հասցված ավիահարվածի հետեւանքով մի քանի մարդ է զոհվել, հաղորդում է իրանական SNN հեռուստաալիքը: «Մի քանի համաքաղաքացիներ են զոհվել», -հաղորդել է հեռուստաալիքը:

Հարձակումը տեղի է ունեցել Մուստաֆա Խոմեյնիի փողոցի տարածքում՝ մոտավորապես ժամը 12:00-ին:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԿԱՇԱՌՔԻ ԴԻՄԱՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԿԱՏԱՐԵԼ

Մեղադրանք է առաջադրվել ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժնի ավագ մասնագետ Դավիթ Վարդանյանին:

Դավիթ Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել, որ, զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժնի ավագ մասնագետի պաշտոնը, իր ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրում հաշվառված, զորակոչային տարիքի հասած Հայրիկ Կարապետյանի օգտին կաշառքի դիմաց գործողություններ է կատարել: Մասնավորապես, պարտադիր զինվորական ծառայությունից երեք տարի ժամկետով տրամադրելու հարցի շուրջ պայմանավորվածություններ է ձեռք բերել Աղաբեկ Գեւորգի Կարապետյանի եւ Էդգար Գեւորգի Կարապետյանի հետ, որից հետո պահանջել է խոշոր չափի՝ 4.221.140 ՀՀ դրամին համարժեք 11.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Աղաբեկ Կարապետյանը Էդգար Կարապետյանի հետ նախնական համաձայնություն ձեռք բերելուց հետո ընդունել է կաշառքի պահանջը, եւ նույն օրը պարտավորվել են մինչեւ 2025 քվականի սեպտեմբերը Դավիթ Վարդանյանին տալ կաշառքի առարկա հանդիսացող 11.000 ԱՄՆ դոլարը: Պայմանավորվածությունից հետո «Պրոտոն» ախտորոշիչ կենտրոնում համապատասխան հետազոտությունների արդյունքում ստացված բժշկական փաստաթղթերի հիման վրա Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից Հայրիկ Կարապետյանի առողջական վիճակի վերաբերյալ կազմված եզրակացությամբ վերջինիս տրվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետում երեք տարի ժամկետով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ



Վայոց ձորի թեմի առաջնորդ Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանը հանդես է եկել հայտարարությամբ՝ պարզաբանելով, որ թեմական առաջնորդի պաշտոնից հրաժարումը իր կողմից նախատեսվել էր դեռ տարիներ առաջ ու այդ մասին բարձրաձայնվել Մայր Աթոռում: «Այս հայտարարության նպատակն է կանխել բոլոր անհարկի, սխալ մեկնաբանությունները, շահարկումները, խեղաթյուրումները: Վերջին տարիներին, Հայ եկեղեցու հետ կապված 2025 թ. դեպքերից շատ ավելի առաջ, ես մի քանի անգամ գրավոր եւ բանավոր, նաեւ Մայր Աթոռում ժողովների ժամանակ, դիմել եւ բարձրաձայնել եմ, որ ցանկանում եմ հանգստյան կոչվել: Ինձ հանգստյան կոչելու տնօրինումը Մայր Աթոռից ստացա 16 մարտի, 2026թ.-ին (գրություն 26/023): Քանի որ սա իմ գրավոր ու բանավոր դիմումների հիման վրա կայացված որոշում է, ուստի չընդունելու որեւէ պատճառ չունեմ: Հետայսու, որպես հանգստյան կոչված հոգեւորական, մնալով իմ ծննդավայրում՝ Վայոց ձորում, հիմնականում կզբաղվեմ գրական, թարգմանական, հրատարակչական գործունեությամբ: Իհարկե, ինձ համար շատ թանկ է Վայոց ձորի թեմը, որ 1992 թվականից մինչ օրս, մոտ 34 տարի, գրեթե զրոյական վիճակից Աստուծո օգնությամբ ինձ է բախտ վիճակվել ստեղծել, եւ այսօր մեր եկեղեցու ինքնաբավ, կայացած թեմերից մեկն է, ուր բազմաթիվ եկեղեցական, կրոնական, կրթական, մշակութային, սոցիալական ծրագրեր են իրականացվում: Ուրախ կլինեմ աջակցել եւ օգտակար լինել նշանակվելիք առաջնորդին եւ իմ նպաստը բերել թեմի հետագա զարգացմանը: Կարծում եմ բոլորի համար պարզ է, որ Հայ եկեղեցին կառուցվածքային, կառավարման եւ կանոնադրական բարեփոխումների կարիք ունի, որպեսզի այլեւս այսպիսի ցնցումների ու ճգնաժամի մեջ չհայտնվի: Ուստի, ի պահանջել հարկին, պատրաստ եմ հետայսու եւս առավելագույնս օգտակար լինել ՀՀ վարչապետի նախաձեռնած Հայ եկեղեցու բարենորոգմանը, հատկապես եկեղեցու նոր կանոնադրությունը պատրաստելուն: Աղոթում եւ մաղթում եմ, որ եկեղեցուց ներս, եկեղեցու շուրջ, նաեւ եկեղեցի-պետություն հարաբերություններում ստեղծված այս վտանգավոր ճգնաժամը օր առաջ հանգուցալուծվի՝ ի բարօրություն մեր հայրենիքի, մեր պետության, մեր ժողովրդի ու մեր Եկեղեցու: Նաեւ հայցում եմ մեր ժողովրդի ներողամտությունը Սյունյաց եւ Վայոց ձորի թեմերում իմ՝ ավելի քան երեք տասնամյա առաջնորդության ակտիվ աշխատանքային տարիներին կամա թե ակամա ունեցածս սխալների ու բացթողումների համար: Մնացեք խաղաղությամբ եւ թող Աստված օրհնի ձեզ»,- ասվում է Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանի հայտարարության տեքստում:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Վայոց ձորի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Աբրահամ արքեպիսկոպոս Մկրտչյանն ազատվել է ծառայությունից:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

Մեկնարկել է Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի եւ Արագածոտնի թեմի դիվանապետ, Մուղնիի Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Գարեգին քահանա Արսենյանի գործով դատական նիստը: Մկրտիչ Սրբազանի փաստաբանները պնդում են՝ անհիմն են մեղադրող կողմի այն հայտարարությունները, թե, իբր, Սրբազան Հայրը, լինելով ազատության մեջ, կարող է ազդեցություն ունենալ կարգալույծներ Ստեփան Ասատրյանի ու Արամայիս Թախմազյանի վրա:- Փաստաբանական խմբի անդամ Արա Զոհրաբյանն ասաց, որ կարգալույծների հովանավորը Նիկոլ Փաշինյանն է, նրանց տրվել են անվտանգության աշխատողներ ու, փաստացի, այսօր նրանք ամենապաշտպանված անձինք են:Փաստաբանական խմբից Երեմ Սարգսյանն էլ նշեց, որ դատարանի համար այլ տարբերակ չկա՝ պետք է փոխել Մկրտիչ Սրբազանի խափանման միջոցը:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի նիստ: Նիստին, Անվտանգության խորհրդի անդամներից բացի, մասնակցել են նաեւ Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եւ այլ պաշտոնատար անձինք: Նիստի ընթացքում քննարկվել են տարածաշրջանում առկա իրավիճակն ու ընթացիկ զարգացումները:

ԿԵՂԾ ՕՂԻ ԵՎ ԾԽԱԽՈՏ

Արմավիրի համայնքային ոստիկանները հայտնաբերել են կեղծ օղի եւ ծխախոտ իրացնող տղամարդուն. նախաձեռնվել է քրեական վարույթ: Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները մարտի 13-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ արմավիրցի 41-ամյա տղամարդը, առանց համապատասխան թույլատվության եւ լիցենզիայի, զբաղվում է օղու եւ ծխախոտի վաճառքով: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում զննություն է կատարվել 41-ամյա տղամարդու՝ Արմավիրի Գայի փողոցում գտնվող մթերային խանութում եւ ավտոտնակում: Հայտնաբերվել են 42 շիշ կեղծ օղի եւ 580 տուփ ծխախոտ: 41-ամյա տղամարդը ձերբակալվել, տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժին, ապա՝ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել վարույթն իրականացնող մարմին: Կատարվում է նախաքննություն:

● *Մարտի 16-ից 17-ը հանրապետությունում բացահայտվել է 167 հանցագործություն, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Իջեւանի համայնքապետարանը բարելավել է Իջեւան քաղաքի ու համայնքի գյուղերի աղբահանությունը: Այդ նպատակով ձեռք է բերվել նոր տեխնիկա, տեղադրվել են բազում աղբամաններ: Աղբահանություն իրականացնող «Իջեւանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկն ամբողջությամբ կատարում է աղբահանության համար բնակիչներից եւ հիմնարկներից վճարների գանձումը: Այն յուրաքանչյուր բնակչի համար կազմում է ամսական 100 դրամ: Սակայն բազում բնակիչներ նախկին ժամանակաշրջանից աղբահանության վճարների պարտքեր ունեն, դրանք գանձելու համար համայնքապետարանը վարչական վարույթներ է հարուցել: Իջեւանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ համայնքապետարանը աղբահանության վճարի գումար գանձելու պահանջ է ներկայացրել մի խումբ քաղաքացիների, այդ առթիվ վարչական վարույթներ են հարուցել, պարտք ունեցողների պարտքի չափը նշվել է 2026թ. փետրվարի 1-ի դրությամբ:

Մարտի 16-ին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը որոշել է քաղաքացի Արթուր Դավթյանից հօգուտ Իջեւան համայնքի՝ «Իջեւանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի բյուջե գանձել 28.160 դրամ, որպես աղբահանության ծառայության համար գանձվող վճար, քաղաքացին պարտավոր է տուգանքի գումարի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում կամովին վճարել համայնքապետարանի՝ «Իջեւանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի հաշվին: Այդ որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

Նման կերպ աղբահանության վճարի գումար գանձելու պահանջներ են ներկայացվել Իջեւան համայնքի 6 բնակիչների: Մարտի 10-ին համայնքի ղեկավար Ա. Ճաղարյանը անշարժ գույքի հարկի գումարի պահանջ է ներկայացրել Իջեւան համայնքի Աչաջուր գյուղի բնակիչ Աշոտ Ափինյանին, որի անշարժ գույքի համար վճարման ենթակա հարկը կազմում է 230 հազար 617 դրամ, ինչը մինչեւ 2025թ. ընկած ժամանակահատվածը չի վճարվել՝ ներառյալ անշարժ գույքի հարկի գումարի վճարման պարտավորությունը չկատարելու արդյունքում առաջացած տույժը: Նման պահանջ ներկայացվել է նաեւ Արման Ճահինյանին, որին պատկանող անշարժ գույքի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 1 միլիոն 627 հազար 122 դրամ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՆԵՑՎԱԾՔ

ՓՈԽՄԱՐԶՊԵՏԸ 11 ՄԼՆ ԴՐԱՄ ԱՆԱՆՈՒՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՑԵԼ

Արմավիրի մարզպետի տեղակալ Արամ Գրիգորյանը, որ պաշտոնի է նշանակվել 2025 թվականի հոկտեմբերի 28-ին, պետական համակարգում անցած ճանապարհ ունի, դրան զուգահեռ՝ լուրջ ունեցվածք:

Մասնավորապես, Գրիգորյանը 1995-2024 թվականներին ծառայել է Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունում, այնուհետեւ աշխատել Մեծամորի համայնքապետարանում՝ նախ որպես համայնքի ղեկավարի օգնական, ապա՝ խորհրդական: Ավելի ուշ դարձել է նաեւ Արմավիրի մարզպետի խորհրդական, իսկ 2025 թվականի աշնանից արդեն զբաղեցնում է փոխմարզպետի պաշտոնը:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրեց պաշտոնյայի 2025 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիրը եւ պարզեց, թե ինչ ունեցվածք ու եկամուտներ ունի մարզպետի տեղակալը:

4 անշարժ գույք, մեկը՝ հենց պաշտոնից առաջ

Հայտարարագրի համաձայն՝ Գրիգորյանը ունի 4 միավոր անշարժ գույք Արմավիրում եւ Մեծամորում.

- բազմաբնակարան շենքում բնակարան՝ համատեղ սեփականությամբ, Արմավիր (2003 թ.)
- հողամաս՝ Արմավիրում (2003 թ.)
- հասարակական նշանակության շինություն՝ Մեծամորում (2022 թ.)
- անհատական բնակելի տուն՝ Արմավիրում (գնել է 2025 թ. օգոստոսի 29-ին)

Վերջին տունը ձեռք է բերվել 25 մլն դրամով: Սակայն հետաքրքիր է, որ դրանից ընդամենը երեք շաբաթ առաջ՝ օգոստոսի 8-ին, Գրիգորյանը վաճառել է իրեն պատկանող հողամասը Արմավիրում՝ 4 մլն դրամով:

Այսինքն՝ գույքի վաճառքից ստացված գումարը ծածկում է տան արժեքի միայն մոտ 16 տոկոսը, իսկ մնացած միջոցների աղբյուրը հայտարարագրից ամբողջությամբ պարզ չի դառնում:

Ավտոմեքենա եւ դրամական միջոցներ

Փոխմարզպետը հայտարարագրել է նաեւ մեկ ավտոմեքենա՝ Toyota, 2012 թվականի արտադրության, որը ձեռք է բերել 2019 թվականին:

Դրամական միջոցները եւս ուշագրավ են:

Բանկային հաշիվներում

- 1,087,000 դրամ

- 4,449,000 դրամ

Կանխիկ

- 4,350,000 դրամ

Այսինքն՝ հաշվետու տարվա վերջում նրա տնօրինության տակ առկա գումարը կազմում է մոտ 9,886,000 դրամ:

Տարեկան եկամուտը՝ ավելի քան 27.5 մլն դրամ

2025 թվականի ընթացքում պաշտոնյայի ընդհանուր հայտարարագրված եկամուտը կազմել է 27,537,341 դրամ:

Այն ձեւավորվել է մի քանի աղբյուրներից.

- նվիրատվություն - 11,000,000 դրամ
- գույքի վաճառք - 4,000,000 դրամ
- տոկոսներ ավանդներից - 1,500,000 դրամ
- այլ եկամուտ - Հայաստանի ազգային անվտանգության ծառայություն - 1,870,000 դրամ
- աշխատավարձ - Արմավիրի մարզպետի աշխատակազմ - 2,167,661 դրամ
- վարձակալություն - «ՔԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ - 2,160,000 դրամ
- աշխատավարձ - Մեծամորի համայնքապետարան - 4,018,715 դրամ
- աշխատավարձ - «Էներգոնորոգգարանտ» - 820,965 դրամ

Եթե հաշվենք, ապա ամենախոշոր աղբյուրը նվիրատվությունն է, որը կազմում է ընդհանուր եկամուտների գրեթե 40 տոկոսը: Բայց մյուս եկամուտներն էլ ահռելի են պետական համեստ պաշտոնյայի համար:

Նվիրատվություն՝ 11 մլն դրամ. բայց ո՞վ է նա

Հենց այստեղ էլ ծագում են առաջին հարցերը:

Հայտարարագրում նշված է 11 մլն դրամի նվիրատվություն, սակայն չի բացահայտվում, թե ով է նվիրատուն, եւ ինչ հիմքով է փոխանցվել այդքան խոշոր գումարը: Հաշվի առնելով, որ խոսքը պետական բարձրաստիճան պաշտոնյայի մասին է, նման փոխանցումների թափանցիկությունը խիստ կարեւոր է: Ինչ ծառայության դիմաց է նա ստացել նվիրատվությունը:

Միաժամանակ եկամուտներ պետական եւ մասնավոր հատվածից

Ուշագրավ է նաեւ եկամուտների կառուցվածքը:

Գրիգորյանը նույն տարում աշխատավարձ է ստացել միաժամանակ մի քանի տեղից՝

- մարզպետի աշխատակազմից,
- Մեծամորի համայնքապետարանից,
- ինչպես նաեւ մասնավոր ընկերությունից՝ «Էներգոնորոգգարանտ»-ից:

Անհամատեղելի են դրանք պարզապես: Այսինքն՝ նրա եկամուտների մի մասը ձեւավորվում է ոչ միայն պետական, այլ նաեւ մասնավոր կազմակերպություններից ստացված վճարումների հաշվին:

Նվիրատվություն կա, բայց վարկն էլ կա

Հայտարարագրում նշված է նաեւ 482 հազար դրամի վարկային պարտավորություն:

Սա եւս հետաքրքիր դետալ է. եթե պաշտոնյան նույն տարում ստացել է 11 մլն դրամ նվիրատվություն, միլիոնավոր դրամների եկամուտներ, ապա հարց է առաջանում՝ ինչու է պահպանվում վարկային պարտավորությունը, թեկուզ համեմատաբար փոքր չափով:

Հարցերը մնում են բաց

Այսպիսով, պաշտոնյայի հայտարարագրի ուսումնասիրությունը մի քանի հարց է առաջացնում.

- ո՞վ է տրամադրել 11 մլն դրամ նվիրատվությունը,
- ինչպե՞ս է ձեւավորվել 25 մլն դրամ արժողությամբ տան գնման ֆինանսավորումը,
- եւ ինչպիսի՞ հարաբերություններ են եղել այն մասնավոր ընկերությունների հետ, որոնցից պաշտոնյան եկամուտ է ստացել:

Պաշտոնատար անձանց հայտարարագրերը հենց այն գործիքն են, որով հասարակությունը պետք է կարողանա հասկանալ պաշտոնյաների ունեցվածքի եւ եկամուտների իրական ծագումը: Սակայն երբ թվերը ամբողջությամբ չեն բացատրվում, հարցերը, բնականաբար, ավելանում են:

ՄԱՅՐ ՕՐԵՆՔԸ ՆԱԽ ՔՊ-Ն ՊԵՏՔ Է ՔՆՆԱՐԿԻ

Հայաստանի նոր Սահմանադրության նախագծի տեքստն արդեն պատրաստ է, այն նախատեսվում է քննարկել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստում, նաեւ համանուն խորհրդարանական խմբակցությունում:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին ասել է ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի առաջին նիստի ընթացքում: «Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը շատ ակտիվ աշխատում է: Ամեն շաբաթ նիստեր ենք հրավիրում: Եւ տեքստը պատրաստ է, ինչպես եւ խոստացել էի: Բայց հրապարակման մասով դեռ նորություն չունեմ, որովհետեւ որոշվել է տեքստը քննարկել նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչությունում եւ խորհրդարանական խմբակցությունում: Դրանից հետո տեքստը հրապարակելու մասով որոշում կկայացվի»,-ասել է նախարարը:

Նախարարը հստակեցրել է, որ ՀՀ նոր Սահմանադրության նախագծի հայեցակարգային դրույթները նախկինում մշակվել էին, իսկ տեքստը մշակել են այդ դրույթների վրա:

Գալյանի խոսքով՝ մոտեցումը հետեւյալն է՝ կենտրոնում մարդն է, քաղաքացին, ժողովուրդը, իսկ կառավարման գործող կարգից շեղում չկա:

«Այն կարծիքին ենք, որ ժողովրդավարության սկզբունքների լավագույն արտահայտումը հենց պառլամենտարիզմի մեջ է: Բայց շատ մեծ փոփոխություններ ենք արել այն համատեքստում, որ փորձել ենք ավելի ապակենտրոնացնել իշխանության թեւերն ու բալանսավորել, օրինակ՝ վերահսկողական մեխանիզմներ տրամադրելով ԱԺ-ին վարչապետի գործունեության նկատմամբ եւ այլն»,-նշել է Գալյանը:

Դատական իշխանության հետ կապված նախատեսելու են երդվյալ ատենակալների ինստիտուտի հնարավորություն: Նաեւ որպես սկզբունք նախատեսվելու է գործերի երկաստիճան բողոքարկման հնարավորությունը, գործերի գրավոր քննության հնարավորությունը, ԲԴԽ-ի որոշումների բողոքարկման հնարավորությունը, ինչն այսօր չկա:

Ավելի վաղ ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը հայտարարել էր, որ ՀՀ նոր Սահմանադրության նախագծի տեքստը կհրապարակվի 2026 թվականի մարտին:

● *Անցած 1 օրում գրանցվել է 16 ավտովթար. 23 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԱՎԵԼԻ ՀԵՇՏ ԿԿԱՌՈՒՑԵՔ

Քաղաքաշինության կոմիտեն պարզեցրել է անհատական բնակելի տների կառուցման ընթացակարգը: Թվային հարթակի միջոցով քաղաքացիները կկարողանան սեղմ ժամկետներում ստանալ տուն կառուցելու համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերը: Այս մասին հայտնում են քաղաքաշինության կոմիտեից:

Այդ նպատակով մինչեւ 2026թ. հունիսի 1-ը urban.permits.e-gov.am հարթակում կկատարվեն անհրաժեշտ ծրագրային կարգավորումները, որից հետո միայն կգործի պարզեցված ընթացակարգը:

Պարզեցված ընթացակարգը վերաբերում է 300 քմ մակերեսը չգերազանցող՝ մինչեւ 2 վերգետնյա եւ 1 ստորգետնյա հարկ ունեցող բնակելի տան եւ 50 քմ չգերազանցող օժանդակ շինության կառուցմանը: Կարեւոր պայմանն այն է, որ տունը պետք է կառուցվի ոչ ձեռնարկատիրական նպատակով եւ քաղաքացուն պատկանող հողամասի սահմաններում, որը համապատասխանում է բնակելի կառուցապատման նպատակային եւ գործառնական նշանակությանը:

Թվային հարթակում նախագծման թույլտվությունը կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքը (ՃՀԱ), շինարարության թույլտվությունը եւ ավարտական ակտը (շահագործման թույլտվություն) ձեւավորվելու են ինքնաշխատ եղանակով, եթե համայնքի ղեկավարը չհաստատի բոլոր հայտերը սահմանված ժամկետներում: Ընդ որում՝ նշված քաղաքաշինական փաստաթղթերը թվային հարթակում տրամադրելու առավել սեղմ ժամկետներ են նախատեսվել:

Նախագծային պահանջները հայտնի են լինելու նախապես. նախագծման թույլտվություն (ՃՀԱ) ստանալու համար լրացված հայտը հասանելի է լինելու համայնքի պաշտոնական կայքում՝ շնորհիվ բոլոր բնակավայրերի համար արդեն մշակված, գլխավոր հատակագծեր եւ գոտեւորման նախագծեր ներառող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի, որոնցում կան յուրաքանչյուր տարածքում կառուցապատմանը ներկայացվող բոլոր պահանջները:

Համայնքի ղեկավարը ՃՀԱ տրամադրելուն զուգահեռ դիմելու է մատակարար կազմակերպություններին՝ գազի, ջրի, էլեկտրականության միացման տեխնիկական պայմանները ստանալու համար:

Ի դեպ, նոր նախագիծ մշակելու փոխարեն քաղաքացիները կարող են օգտվել քաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ մշակված եւ www.minurban.am կայքի «Ուղեցույցներ» բաժնում հրապարակված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերից, որոնք արդեն անցել են փորձաքննություն: Անհրաժեշտ կլինի միայն տվյալ ռելիեֆին համապատասխան տեղակապում իրականացնել:

Պարզեցումները սահմանված են ՀՀ կառավարության 2025թ. դեկտեմբերի 25-ի N 1969-Ն որոշմամբ (https://arlis.am/hy/acts/218867/latest):

ՀԵՏԱՁԳՈՒՄ

ԿԱՐՈՂ Է ՁԵՌՆՏՈՒ ԼԻՆԵԼ ԹԵ՛ ՊԵԿԻՆԻՆ, ԹԵ՛ ՎԱՇԻՆԳՏՈՆԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը նախատեսում է մոտ մեկ ամսով հետաձգել Չինաստան կատարելիք իր կարեւոր այցը, որի շրջանակում պետք է հանդիպեր Չինաստանի ղեկավար Սի Ցզինպինի հետ:

Թրամփը նշել է, որ ցանկանում է մնալ Վաշինգտոնում՝ Իրանի շուրջ շարունակվող ԱՄՆ-Իսրայել ռազմական գործողությունների ֆոնին: Նախատեսված այցը պետք է կայանար մարտի 31-ից ապրիլի 2-ը:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ ֆինանսների նախարար Սքոթ Բեսենթը հայտարարել է, որ հետաձգումը պայմանավորված է նաեւ կազմակերպչական հարցերով: Այս ամենը տեղի է ունենում այն պայմաններում, երբ Չինաստանը խուսափում է Թրամփի կոչերից՝ մասնակցելու Հորմուզի նեղուցի բացմանն ուղղված գործողություններին:

Վերլուծաբանների կարծիքով՝ հանդիպման հետաձգումը կարող է որոշ չափով շահավետ լինել երկու կողմերի համար, քանի որ նրանք դեռ չեն կարողացել համաձայնեցնել որեւէ էական արդյունք կամ պայմանավորվածություն մինչեւ հանդիպումը:

Պեկինը մինչ այժմ պաշտոնապես չի հաստատել Թրամփ-Սի Ցզինպին գագաթնաժողովը, իսկ Չինաստանի արտգործնախարար Վան Ին էլ վերջերս խուսափել է ուղղակիորեն մեկնաբանել Իրանի շուրջ զարգացումների ազդեցությունը հնարավոր հանդիպման վրա:

«Այս տարին կարեւոր է Չինաստան-ԱՄՆ հարաբերությունների համար: Բարձր մակարդակի շփումների օրակարգը առկա է, սակայն անհրաժեշտ է մանրակրկիտ նախապատրաստում, բարենպաստ միջավայրի ստեղծում եւ տարաձայնությունների կառավարում»,- հայտարարել է Վան Ին:

Ակնկալվում է, որ Թրամփի եւ Սի Ցզինպինի հանդիպման հիմնական թեմաները կլինեն առեւտրային եւ անվտանգության հարցերը՝ մաքսատուրքերը, Չինաստանի հասանելիությունը առաջատար միկրոչիպերին, ինչպես նաեւ Թայվանի խնդիրը:

Մինչ այդ, հնարավոր հետաձգման հիմնական ազդակներից մեկն այն է, որ Վաշինգտոնը փաստացի ընդունում է՝ Իրանի շուրջ պատերազմը դեռեւս չի ավարտվելու մոտ ապագայում, ինչն էլ խիստ քննադատության է արժանացել Պեկինի կողմից:

Թարգմանությունը՝ ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

«ՏԱՇԻՐ»-Ը ԱՋԱԿՑԵԼ Է ՔՈՎԻԴԻ ՕՐԵՐԻՆ

Հայաստանում կորոնավիրուսի պատճառով առաջացած խնդիրներին աջակցելու նպատակով ազգային բարերար Սամվել Կարապետյանն ու Կարապետյան ընտանիքը «Տաշիր» բարեգործական հիմնադրամի միջոցով միլիոնավոր դրամներ տրամադրեցին:

Նախ 100 մլն դրամ, որի կեսն ուղղվել էր Նորք ինֆեկցիոն հիվանդանոցին՝բժշկական անձնակազմի խրախուսման ու ժամանակակից սարքավորումներով վերազինման համար, իսկ մյուս կեսը՝ հատուկ հաշվեհամարին՝ համաճարակի հաղթահարմանն ուղղված կառավարության ձեռնարկած միջոցառումներն իրականացնելու համար:

Եւս 300,000 դոլար Սամվել Կարապետյանը տրամադրեց Շտապ բուժօգնության ծառայության աշխատակիցներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար, 100,000 դոլար էլ ուղղվեց կովիդի դեմ պայքարի եւ Ռուսաստանի Դաշնությունից ՀՀ քաղաքացիների տարհանման համար:

Բացի այս խոշորածավալ դրամական օգնությունը, երկրի համար այդ ծանր օրերին, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության հետ համատեղ,Հայաստանում գործող տարեցների խնամքի կենտրոններին, էջմիածնի քաղաքապետարանին, ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրվել են համապատասխան ախտահանիչ միջոցներ եւ խնամքի պարագաներ: Աջակցություն է տրամադրվել նաեւ գյուղական համայնքներին՝ սերմացուի, պարարտանյութի ու անհրաժեշտ տեխնիկական միջոցների տեսքով:

ՊԱՐՋՎԵԼ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել եւ հիմնավորվել է, որ «Արմենիա» ԲԿ-ի բժշկուհի Ա.Ս.-ն 2022 թվականի նոյեմբերից մինչեւ 2023 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում օժանդակել է իր ազգական Գ.Ս.-ին՝նրա օրգանը՝ երիկամը, 40-60 հզր ԱՄՆ դոլարի դիմաց ապօրինի իրացնելուն: Մասնավորապես, Գ.Ս.-ն, մտադրություն ունենալով վաճառել իր երիկամներից մեկը, դիմել է ազգականին՝«Արմենիա» ԲԿ-ի բժշկուհուն, որի հետ բազմաթիվ հեռախոսային խոսակցությունների ժամանակ քննարկվել են երիկամի գնորդ փնտրելու եւ 40-60 հզր ԱՄՆ դոլարով այն վաճառելու հանգամանքները: Բժշկուհին տեղեկանալով, որ Տ.Թ.-ն, առողջական խնդիրներով պայմանավորված, ունի երիկամի փոխպատվաստման անհրաժեշտություն, նրա տվյալները փոխանցել է Գ.Ս.-ին՝ վերջինիս հետ կապ հաստատելու եւ իր երիկամը նրան ապօրինի իրացնելու շուրջ համաձայնության գալու նպատակով: Սակայն Գ.Ս.-ն, տեսնելով Տ.Թ.-ի առողջական ոչ բարելավ վիճակը եւ գիտակցելով, որ երիկամը վաճառելուց հետո հնարավոր է իր առողջությունը նույն կերպ վատթարանա, հրաժարվել է երիկամը վաճառելուց, իսկ Տ.Թ.-ն տեղյակ չի եղել այն հանգամանքի մասին, որ Գ.Ս.-ն իր երիկամի դիմաց պետք է որոշակի գումար պահանջեր: Այսպիսով, «Արմենիա» ԲԿ-ի բժշկուհի Ա.Ս.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 43-183-րդ հոդվածի 1-ին մասով (մարդու սաղմի, պտղի, մարդու կամ դիակի բջիջների, հյուսվածքների, օրգանների կամ կենսաբանական նյութերի կամ հեղուկների ապօրինի շրջանառությանն օժանդակելը): Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄ

ԱՎԵՏԱՐԱՆԸ ՀԱՅԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՆՄԱՆ Է

Սկեւռայի Ավետարանը՝ 12-րդ դարի հայկական ձեռագիրը, ուշագրավ ուղի է անցել՝ Կիլիկիայի հայկական թագավորության ափերից մինչեւ ժամանակակից Լեհաստան: Այն անգամ անհետացել է Երկրորդ համաշխարհային պատերազմի թոհուբոհում, հետո 20-րդ դարի վերջին գրեթե պատահաբար հայտնաբերվել է, կրկին անհետացել, ապա «վերածնվել»:

Այս մասին է պատմում հայ-լեհական արտադրության «Կորցված, գտնված, թաքցված» վավերագրական ֆիլմը, որը ցուցադրվեց Մատենադարանում: Այն ռեժիսոր Վահրամ Մխիթարյանի՝ 5 տարվա հետաքննական աշխատանքի արդյունքն է եւ բացահայտում է արժեքավոր ձեռագրի ոդիսականը: Մատենադարանում տեղի ունեցավ լրագրողների հետ հանդիպում, որի շրջանակում ցուցադրվեց Սկեւռայի Ավետարանի բացառիկ կրկնօրինակը՝ ֆաքսիմիլ: «Սա այն եզակի դեպքերից է, երբ վստահ կարելի է ասել, որ բնօրինակը հուսալի ձեռքերում է, իսկ դրա բացառիկ կրկնօրինակը՝ Մատենադարանում: Շատ կարեւոր է, որ այս կարեւոր պատմական անցքն էկրանավորվել է, եւ այսօր ծնունդ է առել մի ֆիլմ, որը մեր մշակույթի արձանագրումն է, մեր պատմության վավերագրումը»,-ըստ Ֆակտորի՝ նշեց ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը:

Ի դեպ, վերջերս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաշտոնական այց էր կատարել Լեհաստան եւ եղել էր Լեհաստանի ազգային գրադարանում, որտեղ էլ պահվում է Սկեւռայի Ավետարանի բնօրինակը: Թեմայի շուրջ Լեհաստանում քննարկումներ է ունեցել նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը շեշտեց, որ որպես հայերեն ձեռագրերի մայր կառույց՝ չէին կարող անտարբեր անցնել հայերեն ձեռագրերի հանրայնացման հանդեպ. «Ձեռագրական ժառանգության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը լուծում է նաեւ այդ ժառանգության անվտանգության խնդիրը: Այն, ինչ վերաբերում է հայերեն ձեռագրերի հանրայնացմանը, դրանց գիտական հետազոտմանն ու վերականգնմանը, մեր կառույցի գիտական առաջնահերթություններից է»:



Կրակովի համալսարանի պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկան, որը զբաղվում է «Սկեւռայի Ավետարան»-ի հետազոտմամբ, նշեց, որ համալսարանի գործընկերներն են ոգեշնչել իրեն զբաղվել այդ գործով. «Ավետարանը նման է այն հայերի ճակատագրին, որոնք իրենց կյանքը կապել են Լեհաստանի հետ... Այն սկիզբ է առել Կիլիկիայից, հետո հայտնվել է Ղրիմում, Լվովում, Կրակովում, Գնեզնոյում, իսկ այժմ Վարշավայում է»:

Ռեժիսոր Վահրամ Մխիթարյանը, որը նաեւ սցենարի հեղինակ եւ համարտադրող է, եւս այն համոզման է, որ ֆիլմի դրամատիկ ուղին շատ նման է հայ ժողովրդի ճակատագրին. «Ֆիլմը նկարահանելու ցանկություն առաջացավ, երբ Լեհաստանում ապրելիս զգացի, որ դուստրս կարող է բախվել ձուլման վտանգի: Վճռեցի պատմել նրան իր արմատների մասին»: «Սկեւռայի Ավետարանի ճակատագիրն ինչ-որ չափով ներկայացնում է Լեհաստանի հայկական համայնքի պատմությունը, ինչը ձեռագրի ուղին դարձնում է ավելի քան խորհրդանշական»,- նշվում է ֆիլմի նկարագրության մեջ: Ֆիլմի հեղինակները փնտրում եւ գտնում են ձեռագրի ճանապարհին հայտնված վկաներին՝ նրանց, ովքեր առանցքային դեր են խաղացել հայկական ձեռագրի հայտնաբերման եւ փրկության գործում, եւ որոնց կյանքում էլ այս բացառիկ ձեռագիրը թողել է իր անջնջելի հետքը:

«Կորցված, գտնված, թաքցված» վավերագրական ֆիլմի սցենարի հեղինակներն են՝ Ալեքսանդրա Մայջինսկան, Վահրամ Մխիթարյանը, օպերատորը Վահրամ Մխիթարյանն է, պրոդյուսերներն են՝ Վահրամ Մխիթարյանը, Ալեքսանդրա Մայջինսկան, Ծովինար Սողոմոնյանը:

ՇՈԿԻ ԵՆԹԱՐԿԵՑ

Նազենի Հովհաննիսյանն այս շաբաթ դրական իմաստով շոկի ենթարկեց իր հետեւորդներին՝ ստիպելով շատերին մի պահ կանգ առնել ու անկեղծորեն ուրախանալ հաղորդավարուհու «նորությամբ»: Իսկ ավելի ուշադիր ընթերցողը հասկացավ, որ սա գեղեցիկ պոեզիա էր, որտեղ դերասանուհի-հաղորդավարուհին մարմնավորում էր հերթական հերոսուհուն:

Նազենին նուրբ ու եթերային զգեստով է, մայրանալ պատրաստվող կնոջ կերպարով կարդում է «Թափանցիկ արեւ» ստեղծագործությունից հատված (հեղինակ՝ Արման Աղլամազյան): Թեեւ նա հրապարակման վերջին հատվածում նշել էր՝ «սա ԿԵՐՊԱՐ է միայն, իմ կյանքը չի ու իրական չի», թե՛ հետեւորդները, թե՛ հայտնիներից շատերը շտապել էին նրան շնորհավորել, սակայն Նազենին սիրով արձագանքել է բոլորի ջերմ խոսքերին: «Իրական չի դեռ, բայց թող դառնա իրական. ամեն դեպքում, շատ հուզիչ է ձեր ջերմությունը, ու ես շնորհակալ եմ»,-իր մեկնաբանության մեջ գրել է նա:

Giving Pledge

ՄՏԱՀՂԱՑՎԵԼ Է ՈՐՊԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ

Giving Pledge նախաձեռնությունը, որը 2010 թվականին մեկնարկել են Բիլ Գեյթսը, Ուորեն Բաֆեթը եւ Մելինդա Ֆրենչ Գեյթսը, սկզբնապես մտահղացվել է որպես գերհարուստների համար բարոյական կողմնացույց. միլիարդատերերը հրապարակավ խոստացել են իրենց կարողության մեծ մասը նվիրաբերել բարեգործությանը կամ իրենց կենդանության օրոք, կամ մահից հետո: Սակայն այսօր նախագիծը ավելի ու ավելի է հայտնվում քննադատության, ծաղրի եւ տեխնոլոգիական էլիտայի անդամներից ցուցադրական հեռավորության կենտրոնում, գրում է NYT-ը:

Սկանդալի վերջին փուլը բխում է ոչ միայն ժամանակակից բարեգործության շուրջ գաղափարախոսական բանավեճերից, այլեւ Գեյթսի եւ ֆինանսիստ Ջեֆրի Էպշտեյնի անձնական կապերի մասին աճող ուսումնասիրությունից: Այս ֆոնին նախաձեռնությունը, որը վերջերս համարվել է «պատասխանատու կապիտալիզմի խորհրդանիշ», քննադատների կողմից ավելի ու ավելի է նկարագրվում որպես կասկածելի համբավ ունեցող փակ ակումբ: Վենչուրային կապիտալիստ Պիտեր Թիլը, որը երբեք չի միացել նախագծին, բացահայտորեն այն անվանել է «կեղծ բումերների ակումբ՝ Էպշտեյնի նմանությամբ» եւ, ըստ լրատվամիջոցների հաղորդագրությունների, գաղտնի կոչ է արել այլ միլիարդատերերի, այդ թվում՝ Էլոն Մասկին, դուրս գալ ծրագրից: Նա կարծում է, որ նախաձեռնության միջոցների զգալի մասն ուղղվում է հստակ ձախ-լիբերալ օրակարգ ունեցող նախագծերին, մինչդեռ Գեյթսը ազդեցություն ունի այդ ռեսուրսների բաշխման վրա:

Հիմնադրի հեղինակությունն ավելի է վնասվել նրա սեփական խոստովանությունների պատճառով. Գեյթսը հաստատել է Մելինդա Ֆրենչ Գեյթսի հետ ամուսնության ընթացքում արտամուսնական կապերի մասին, որոնցից մի քանիսը, ըստ լուրերի, կապված էին Էպշտեյնի շրջապատի հետ: Սա հետագայում դարձավ այն գործոններից մեկը, որը հանգեցրեց նրանց 27-ամյա ամուսնության խզմանը: Չնայած Գեյթսն ինքը նախկինում հայտարարել էր, որ զղջում է Էպշտեյնի հետ իր հանդիպումների համար, որոնք տեղի են ունեցել նրա՝ 2008 թվականի դատապարտումից հետո, այդ շփումների շուրջ հասարակական բողոքը շարունակում է ճնշում գործադրել նրա հետ կապված բոլոր նախաձեռնությունների վրա:

Այս ֆոնին ավելի ու ավելի շատ մասնակիցներ կամ վերանայում են իրենց մասնակցությունը Giving Pledge-ին, կամ դուրս են գալիս դրանից: Օրինակ՝ Coinbase կրիպտոարժույթների փոխանակման հիմնադիր Բրայան Արմսթրոնգը իր անունը հեռացրել է նախաձեռնության կայքից դեռեւս 2024 թվականին՝ միանալուց մի քանի տարի անց:

● *Մարտ 19-ին՝ հինգշաբթի, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում տեղի կունենա «Վերջին կանգառ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս մասնակցել դրսեկության ձեւով (էքստեռն կարգով) ավարտական քննություններին: Հիմա հեռավար հնարավորություններ շատ են բացվել:

Անուշավան Ղազարյան, 45 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Հարցը կարգավորվում է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 14 հոկտեմբերի 2010 թ. N 1507-Ն հրամանով հաստատված «Դրսեկության ձեւով (էքստեռն) փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» պահանջներով: Հիմնական կրթության վկայական եւ միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար էքստեռն ավարտական եւ պետական ավարտական քննությունները կազմակերպվում են 3 քննաշրջաններով. 1-ին քննաշրջան՝ փետրվարի 15-ից մարտի 15-ը ներառյալ՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի, 2-րդ քննաշրջան՝ ըստ ավարտական եւ պետական ավարտական քննությունների ժամանակացույցի, մյուս առարկաները՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի, 3-րդ քննաշրջան՝ հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 15-ը ներառյալ՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». էքստեռն ավարտական եւ պետական ավարտական քննություններ կարող են կազմակերպվել նաեւ 1-ին եւ 3-րդ քննաշրջաններում՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մեր երկրում շատ դասիվ է, կասեմ՝ ինչպես կարող եմ դիմել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, որ իմ կամ մյուսների խնդրով զբաղվի:

Սուսաննա Վարդանյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Բողոքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները քաղաքացին անձամբ կարող է ներկայացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ուղարկել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացնել առցանց բողոք: Բողոքի համար որեւէ հատուկ ձեւ սահմանված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը: Բողոքում պետք է նշվեն նաեւ մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները:

ՀՀ ՄԻՊ գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք նաեւ, որ եթե դիմողն ունի գործի պարզաբանման եւ լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղի ճանապարհին անմխիթար վիճակում է. բնակիչները դիմում են Փաշինյանին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 3 - 7 + 6 + 10
	Կոտայքի լեռներ	- 2 - 6 + 6 + 9
	Կոտայքի նախալեռներ	0 + 3 +10 + 13
	Գեղարքունիք	- 2 - 6 + 3 + 7
	Լոռի	- 1 + 3 + 7 + 11
	Տավուշ	- 1 + 2 + 8 + 11
	Արագածոտնի լեռներ	- 4 - 7 + 4 + 7
	Արագածոտնի նախալեռներ	- 1 + 4 + 9 + 14

	Արարատ	+ 1 + 4 +13 + 15
	Արմավիր	+ 2 + 5 +16 + 18
	Վայոց ձորի լեռներ	- 4 - 7 + 4 + 7
	Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 6 +15 + 18
	Սյունիքի լեռներ	- 2 - 5 + 2 + 6
	Սյունիքի նախալեռներ	- 2 + 2 + 8 + 11
	Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 +11 +14
	Երեւան	+ 2 + 4 +14 +16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*